



# Ա Ր Ա Ր Ա Տ

ԹԻԻ Զ. Է. — ՇՐՋԱՆ ԺԱ.

ՏԱՐԻ ԺԱ. — ՅՈՒՆԻՍ 30. ՅՈՒՆԻՍ 31.

## ԿՐՈՆԱԿԱՆ

### ՊՍՊՍԿԱՆ ՀԱՅԲ

ԻՐ

### ՀԱՍԵՐՈՅ ՓՐՊՈՐՔ-ՄԻՆՆ

Ա. Մ. և. այլ ստիճիներով Ա. Կենտրոնիկի և Ա. Երևանցի Միտիմարեան պատգամներ կու միտարանութեանց՝ վանուց և նոցա ուղղութեանց և համոզմանց համար Բարեշնորհ Ա. Վ. Բ. . . ևանցի գրած և Արարատ ամառադրոյս նախընթաց թիւերէն երկու ամսամիտ երկու ամս հրատարակեալ երկու յօդուածոց<sup>(\*)</sup> մէջ ուշադիր բանասերք անշուշտ գիտեցին յիշեալ երկու վանուց միտարանութեանց անդամոց արտայայտած այն տարօրինակ օտարամոլ համոզմունքը միանգամայն հակասական միտքը՝ թէ՛ ինքեանք

ջերմեռանդ և բարեմտաբան ձևայ՝ և հայութեան անձնանուէր են, և թէ՛ արտառայ պատգամ եկեղեցւոյ իրիւթիւն գանելը կարելի չլինելով՝ կցանկան որ Հայտ պատգմն հնազանդին — կամ պատգամ քառան և ինչ — որպէս զի փրկուին.

Պատգամն եկեղեցւոյ Հիմնադրութեան առաջին դարուց պատմութեան և պատգամն Հին վարդապետաց գոնե մի քանի հատին գրուածներէն՝ վերսլիշեալ նորահասար վարդապետութեան աշակերտք կրնան ապացուցանել՝ զի պատգամն եկեղեցին Քրիստոսնէական Առաքելական միւս եկեղեցիներէն աւելի և գերազանց այդպիսի մի իրաւունք և յատկութիւն ունի, երբ Փաղէս և Բարդուղիմէոս առաքեալներէն հիմնուած՝ հաստատուած՝ և անգրանիկ Քրիստոսական — Առաքելական եկեղեցի լինելը համարհասակ վկայուած Հայոց եկեղեցին՝ իւր ունեցած բարձր գերքով պղծալի վարդապետութեամբք՝ և բազում խիւր նախնական պարզութեանց և ուղղափառ գա-

(\*) Տես Արարատ, Ժ. շրջան, Թիւ Ժ. (Հոկտեմբեր), երես 588 — 596. ԺԱ շրջան, Թ. Գ (Մարտ), երես 145 — 146.



ւանութեանց մէջ ցարգ անսայթաք յարատեւելոյն փառքը եւ պարծանքը վայելելով՝ այդպիսի մոլորամիտ վարդապետութիւն չէ ընդունած եւ չէ քարոզած երբէք, եւ եթէ այլք քարոզեն եւս՝ չկրնար եւ չէ կարելի քարոզուածը քրիստոնէական եկեղեցւոյն կազմութեան՝ ընդհանրականութեան՝ ուղղութեան՝ արդարութեան եւ ճշմարտութեան համաձայնեցնել եւ իրաւացի համարել, ո՛ր թողումք որ՝ այդպիսի իրաւունքը պապական եկեղեցւոյն եւս երբէք տրուած չէ եւ չկրնար տրուիլ ոչ Յիսուս Քրիստոսէ եւ ոչ ճշմարիտ տիեզերական եղած օրինաւոր ժողովներէն, մանաւանդ որ՝ տակաւին ծանր լինուածութեան առարկայ դարձած է եւ պարզապէս լուծուած չէ՝ Ս. Պետրոսի յաջորդութիւնը ձեւացնող՝ բայց իրական փաստերէ խալառ դուրի եղող յիշեալ (պապական) եկեղեցւոյ առաքելական յաջորդութեան նկատմամբ երեւակայուած եւ հաստատել ճգնաժողովի նշանաւոր եւ կարեւոր խնդիրը՝ թէ եւ անդրադեռնականք եւ նշուելիք Խոթորական հնարագործութեամբք եւ խարդաւանք յեղինկ իջեալ թղթոց նման գրութիւնք եւ փաստեր հնարելով կրտսնին իւրեանց նպատակներուն հասնել, ուստի եւ ըստ այսմ ինչով եւ ի՞նչպէս պէտք է բացատրել պապականաց եւ նոյն իսկ պապամու ուժացեալ Հոյոց կղերականաց այն համոզումք եւ մուլութիւնք՝ որ ինքեանք իւրոյ պապականութեան մէջ հոգւոյ փրկութիւն կերեւակային եւ գտնել կկարծեն, իսկ առաքելներէն

հիմնուած եւ պարզապէս առաքելական յաջորդութեամբ շարունակուած Հոյոց եւ Յունաց եւնի եկեղեցեաց մէջ հակառակը կերեւակային՝ չարաչար մեղանչելով մինչեւ անգամ տիեզերաց Փրկիչ Յիսուս Քրիստոսի գէմ՝ որ խոտացած է իւր առաքելոց եւ նոցա յաջորդաց՝ միանգամայն միացած է իւր հիմնած եկեղեցւոյ հետ ցկատարած աշխարհի. «Ես ընդ ձեզ եմ . . . մինչեւ ի կատարած աշխարհի» (Մատ. ԻԸ 20):

Եթէ հանգամանքները եւ միջոցները ներեր են պապականութեան՝ որ նա առաւել արդիւնաւոր լինել կարողացեր եւ տարածուեր է, եւ Հոյոց եւ Յունաց եկեղեցեաց հետ բազդատելով՝ ենթադրենք թէ բազմապատիկ առաւելութիւն ունի պապականութեան ժողովուրդը եւ այն շատ ազգաց մէջ, սակայն այս առաւելութիւնը օրինաւոր եւ կանոնական փաստ չկրնար լինել վերը յիշուած երեւակայութեան հաստատութեան համար, մանաւանդ թէ՛ եթէ՛ չորս դար չլրացնող լուտերականութեան կամ բողոքականութեան ի ներկայիս ունեցած անակնուկնելի ստուարաթիւ առաւելութիւնը՝ հետզհետէ կամ գուցէ սակաւ միջոցով՝ պապականութեան թուոյն հաւասարուելով՝ գուցէ նա եւ հետզհետէ աւելի գերազանցուելով՝ կրնայ առաքելական եկեղեցի կազմել եւ համարուիլ, այն ստեն պապականք եւս թող ինքեանց ներեն կարծել՝ զի միայն իւրեանց դաւանութեան կամ եկեղեցւոյ մէջ է հոգւոյ փրկութիւնը:

Եթէ պապականք կկարծեն՝ որ իւրեանց եկեղեցին նախնական պարզու-



Թեամբ՝ աւանդութեամբք՝ ուղղափառ  
 դաւանութեամբ՝ եւ հաւատով յարա-  
 տեւած է ցարդ եւ կպարծենայ իսկ այլ  
 անաքերական եկեղեցիքք՝ այսպէս կամ  
 այնպէս՝ աւելի կամ նուազ շեղուած  
 համարելով՝ միայն անարատ եւ հաւա-  
 տարիմ մնացած եւ չշեղուած իւրեանցը  
 (պապականք) կկարծեն, եւ ըստ այնմ  
 ինքնին ինքեանց իրաւունք կրտան հա-  
 ւատալու՝ որ հոգւոյ փրկութիւնը մի-  
 այն պապական եկեղեցւոյ մէջ է, ա-  
 կայն հետադասելով պապական եկե-  
 ղեցւոյ պատմութիւնը եւ բաղում կընծ-  
 քոտ անցքերը, նկատելով եւ դատե-  
 լով նոյն իսկ պապական եկեղեցւոյ  
 մէջ ուսած՝ սնած՝ մեծցած եւ համ-  
 բաւ տողացած նշանաւոր աստուածա-  
 բան անձանց ընդ դէմ պապակա-  
 նութեան գրած քննութիւնքը եւ բո-  
 ղոքները, նոյն իսկ վերջին տարիներս  
 հրատարակուած բազմաթիւ եւ գիտ-  
 նական քննութիւնքը եւ բողոքները,  
 քաջ գիտնալով միանգամայն՝ որ Հայ-  
 աստանեայց եկեղեցին միայն եւ մի  
 միայն ցարդ յարատեւած է եւ կպար-  
 ծենայ նախնական պարզութեամբ եւ  
 սղջամիտ դաւանութեամբ եւ ինչ որ  
 ցայսօր քաջ ճանաչած եւ գովեստնե-  
 ըով հռչակած են Եւրոպացի երեւելի  
 գիտնական անձինք եւ նոյն իսկ պապա-  
 դաւան բազմահմուտ եւ անկեղծ ան-  
 ձինք՝ մինչդեռ պապականութիւնը թէ-  
 պէտ սենթոյ առաւելութիւն եւ ըստ  
 արտաքնոյն հղօր դիրք եւ արդեցու-  
 թիւն, բայց ըստ կրօնականին եւ ըստ  
 բարոյականին՝ իստ շատ խճողած եւ  
 նսեմացած է ինչ հ Առաքելական ե-

կեղեցւոյ նախնական եւ պարզ դիրքէն  
 չափազանց շեղուած եւ մոլորուած է, եւ  
 մինչեւ անգամ կը յանդգնի զպապ կոչել  
 գլուխ եկեղեցւոյն Քրիստոսի եւ անտա-  
 լական, եւ ինչ որով կատարելապէս եւ  
 չարաչար կմեղանչէ ընդ դէմ Մի Սուրբ  
 Ընդ հանրական եւ Առաքելական եկե-  
 ղեցւոյ եւ նոյն իսկ տիեզերաց Փրկիչ  
 Յիսուս Քրիստոսի դէմ, ուրեմն եւ այս  
 սեռութեամբ իրաւունք չմնար նոցա  
 պարծենալոյ՝ որ իբր թէ արտաքոյ պա-  
 պական եկեղեցւոյ հոգւոյ փրկութիւն  
 չկայ, իսկ անոր իրաւունք չունի  
 Եսկ՝ գրեթէ միջին դարերէն սկսեալ՝  
 պապական եկեղեցւոյ վարդապետաց  
 հակասական գրուածոց եւ աստուա-  
 ճարանութեանց դիմելով՝ ուրիշ վա-  
 տեր յուզելը եւ առարկելը՝ ընդունելի  
 վիայութիւններ չէ կարելի համարել,  
 վասն զի Քրիստոսն էից կրկնապատիկ ա-  
 ռաւելութիւնը ունեցող կապաշտից  
 եթէ չեմք ներք իւրեանց մինչեւ ան-  
 գամ հնադարեան բազմաթիւ քրմե-  
 ըսով եւ հեղինակներով փաստաբանել  
 Քրիստոնէական կրօնի օրբութեան՝ ճշ-  
 մարտութեան եւ գերազանցութեան  
 դէմ, ուրեմն միեւնոյն կերպով եւս  
 պէտք է իմանալ պապականաց բազ-  
 մաթիւ վարդապետաց եւ հեղինակաց  
 փաստաբանութեանց համար՝ մանա-  
 ւանդ թէ ընդհ եկեղեցւոյ նախնի  
 եւ սուրբ վարդապետաց — մեզ հասած  
 եւ անխարդախ մնացած — գրուածքնե-  
 րէն եւ ոչ իսկ մի բառ կարելի է գտնել՝  
 զի պապադաւանիցն որ ջանից եւ ճրգա-  
 մանց նպաստաւոր վիայութիւն եւ փաստ  
 մտածակարարէն արդեւ չի մնում



Ապա ուրեմն ուստի՞ կառնուեն նոյն իսկ պապագաւան մեր հայկազն եղբարք կամ թէ Վենետիկի եւ Վիէննայի Մխիթարեան միաբանութիւնք՝ եւ պապական եկեղեցւոյ մէջ միայն փրկութիւն կերտոցեն:

Եթէ անկեղծ են իւրեանց եռանդ եւ քանք՝ որով կսիրեն զՀայութիւն եւ Հայ մնալ, միանգամայն հորա համար անձնանուէր են, ուրեմն կըխոստովանին որ հայու սերունդ են, եւ նկատելով նոցա (պապագաւան մերազնեայց) ի Հայոց եկեղեցւոյ հերձուիլը՝ որ մի քանի դար հաղիւ կլինի, նկատելով՝ որ կճանչնան՝ կսիրեն եւ կյարգեն Քաղէոս եւ Քարդուղիմէոս առաքեալները, Գրիգոր Առևստուորիչը, Մեծն Ներսէսը, Ծնորհալին եւ այլ նշանաւոր եւ սուրբ Հայրապետքը եւ վարդապետքը՝ որ մեր Հայաստանեայց Ա. Եկեղեցւոյ ուղղափառ եւ բազմարդիւն առաջնորդները եւ ախոյեանները եղած են, յորոց շատերը նոյն իսկ պապական եկեղեցիք եւ Յոյնք եւ այլք՝ սահմանեալ օրերում կոծնեն եւ արժանաւոր յարգ եւ պատիւը ակնածութեամբ կնուիրեն նոցա, մեր պապագաւան եղբարք ի՛նչպէս պիտի մեկնեն յիշեալ Ա. Հարց դաւանութիւնը եւ դիրքը, միթէ նոքա այն ատեն պապագաւան էին, եւ եթէ չէին՝ այժմ փրկութիւն գտած չե՞ն, եւ եթէ չեն փրկուած՝ քննու համար կոծնեն, եւ եթէ փրկութիւն գտած են՝ ի՛նչպէս կրացարեն զայն, պապին հնազանդութիւն եւ հպատակութիւն յայնա՞ծ են, պապականութեան գաւանանքը ընդունած են եւ խարդաւանանքին հետե-

ւած: Սակայն ուշի ուշով հետազօտելով՝ պարզապէս կրնամք իմանալ՝ որ Հայաստանեայց անդրանիկ եկեղեցին սկսուած է ընդ. եկեղեցւոյ հետ եւ զարդ ինքնուրոյն եւ ինքնօրէն կազմակերպութեամբ եւ վարչութեամբ յարատեւած է, ուրեմն եւ ոչ ումեք հպատակած է՝ բաց ի ընդ. եկեղեցւոյ համակամ եւ միասիրտ կազմած ճշմարիտ տիեզերական ժողովներէն եւ նոցա սահմանադրութիւններէն, եւ թէպէտ շատ ժամանակ յունական եւ պապական ըստ կրօնականին ասպատակողներ խլրտած են Հայաստանեայց Եկեղեցւոյ մէջ, բայց մասնաւոր զեղծումներ եւ կորուստներէ զատ արդիւնք վաստակած չեն եւ այսպիսի վաստակոց ճնունդ են մի քանի հայայոյնք, մի քանի միաբարեանք ( ունիթորք ), միխիթարեանք, պատպաղաւան եւ լուտերական հայք:

Արդ պապագաւան մեր Հայ եղբարց կմնայ անկեղծ խոստովանիլ, որ կամ մեր եւ իւրեանց իսկ սիրելի եւ պաշտելի Առաքեալք՝ Հայրապետք եւ Հարք սխալած են եւ փրկութենէ զրկուած, եւ կամ ինքեանք՝ պապական հայք սխալուած են եւ փրկութենէ զրկուած: Առաջինը չեն կարող ասել եւ փաստաբանել, վասն զի ի նոցանէ շատերը կրտօնուին ընդհանուր Եկեղեցւոյ մէջ՝ ինչպէս նաեւ ինքեանք կոծնեն, եւ այն ատեն ակամայ պէտք է խոստովանին՝ զի ինքեանք նոցա արժանաւոր սերունդ եւ որդիք չեն, նոցա հիմնած Առաքելական Եկեղեցիէն հերձուած ելած են, սխալուած եւ մոլորուած են, միանգամայն ի զուր կերտոցեն՝ որ միայն պապա-



կան եկեղեցւոյ մէջ փրկութիւն կրգրու-  
նեն:

Այսքանը բաւական է կրօնականին  
համար:

Այժմ՝ գամք ազգայինին վերայ՝ հա-  
մառօտել:

Ոչ որ կրնայ ուրանալ եւ պնդել՝ զի  
պապական եկեղեցին իսկզբանէ անտի  
ինքեան հպատակած բոլոր ազգերը ի մի  
ձուլել չջանար: Նա կատարելապէս եւ  
ըստ ամենայնի ազգութեանց թշնամի  
է՝ ազգութիւնքը ջնջել կերպով: որոյ  
համար բաւական ապացոյց են եւրոպա-  
կան նոյն իսկ պապադաւան ազգաց եւ  
տէրութեանց ընդ դէմ՝ պապականու-  
թեան ներգործած հակահրութիւնքը  
եւ ատելութիւնքը, ազգային զգացմամբ  
ոգեւորուած եւ ի միութիւն գիմնդ Ն-  
տարացոց՝ Գերմանացոց՝ Անգղիացոց  
եւ այլոց ընդ դէմ՝ պապականութեան  
ղինուիլը, եւ վերջապէս պապադաւան  
Հայոց մէջ քանի տարիներէ հետէ՝ յու-  
ղուած եւ շարունակուած հակահա-  
սուենեան եւ հասուենեան խնդրոյն եւ  
գժտութեան բուն շարժառիթը ինչ է՝  
Հայութեան՝ ինքնօրինութեան եւ Հայ-  
կական արարողութեանց խնդիր չէ՝  
գորս հասուենեան եպիսկոպոսն ի հա-  
ճոյս պապին կրօնքնի զօհել բոլորովին  
եւ պապամոլ Հայերը հետզհետէ իսկա-  
րաբէնացնել:

Յորչափ այս խնդիրը պարզ եւ բազ-  
մածանօթ է՝ Մխիթարեան միաբանու-  
թիւնք եւ պապադաւան հայք ի զուր  
կիսօսին եւ կկարծեն՝ որ պապադաւան  
մնալով՝ կարող են եւ Հայ մնալ: որով  
միանգամայն փրկութիւն գտնել: Չա-

րաչար կիտարուին՝ եթէ կհաւատան որ՝  
պապական մնալով՝ Հայութիւնը կրնան  
սիրել եւ հայութեան համար անձնա-  
նուէր աշխատել: մինչդեռ իբր բնական  
հետեւանք պիտի ենթագրեն՝ զի հայու-  
թեան ի կորուստ կրնան անձնանուէր  
շահատակել՝ ինչպէս որ հիմակուան  
ջանքերով եւ համոզմամբ եղած են եւ  
պիտի լինին, եւ եթէ Մխիթար արքայի  
օրէն սկսեալ ցայսօր իւրեանց միաբա-  
նութեանց մէջ պատահած անձանց կեն-  
սագրութիւնքը՝ գրուածքները՝ գործ-  
քերը եւ այլ բաղմապիսի անցքերը հե-  
տադօտեն եւ քննեն, կրնան ճշտիւ իմա-  
նալ՝ որ որքան Մխիթար արքայն եւ  
ժամանակակից մխիթարեանք աւելի  
ջերմեւանդ Հայ եւ հայասէր էին եւ  
Հայութեան համար ըստ ուսումնակա-  
նին բաղմալստտակ աշխատաւորներ,  
այժմեան մխիթարեանք եւս նոյնքան եւ  
աւելի հեռացած են Հայութենէ՝ Հայ-  
կական հարազատ զգացմունքէն եւ ե-  
ռանդէն, այնպէս որ գուցէ մի գար յտե-  
ւէ եւ ահա պապականութեան բաղմա-  
կու խորխորատին մէջ իսպառ կորնչին՝  
միայն պատմութեանց մէջ Հայութեան  
յիշատակը թողլով՝ Չամչեանի ու Թէո-  
գորեանի եւ նոցա նմանեաց պէս ար-  
ժանայիշատակ անգամներէ իսպառ եւ  
բոլորովին զուրկ մնացած լինելով՝ մի-  
անգամայն հասուենեանի նման պապա-  
մոլից դաւաճանութեանց եւ առաջնոր-  
դութեանց անձնատուր եղած:

Թո՛ղ այսուհետեւ եւս պապական  
Հայք ի զուր չերեւակայեն եւ զանձինս  
չխաբեն՝ որ պապականութեամբ երկար  
ժամանակ կարող են Հայ մնալ եւ հա-



յու թեամբ անորից՝ եւ այս կսկծառիթ  
 եւ սորալի վտանգէն կրնան անատուիլ  
 եթէ պապականութիւնը բոլորովին թող-  
 նելով՝ գիմեն շայտտանեայց մայրենի  
 առաքելական եկեղեցւոյ ծոցը՝ ուր ոչ  
 միայն փրկութիւնն կրանեն անտարա-  
 կոյ՝ ինչպէս գտած է մեզ սուսցած  
 են մեր եւ նոցա պաշտած Ս. Հարք, այլ  
 եւ շայտթիւնը՝ թեթեւ վտանգներ  
 անգամ եթէ պապսին՝ քայց եւ այն-  
 որէս գարձեալ՝ ապահոված է կորըս-  
 տենէ, եւ եթէ ի մի սիրտ եւ ի մի հոգի  
 միանամք՝ փոքրիկ բաժանումները զիս  
 մէջ աւերով՝ աւելի կզօրանամք եւ կօդ-  
 տու իմք:

Վ. Ե. Մ.

ԹԻ ԻՆՉՊԵՍ

**ՀՈՌՎՄԵՍԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ**

**Ո Չ Ե Ի Ս Է**

**Գ Ա Ք Ո Ւ Ղ Ի Կ Է Ե Կ Ե Ղ Ե Յ Ի**

(Շ-Բ-Ն-Կ-Բ-Է)

2.

Թէ ինչպէս շատ անգամ եկեղեցին իսկու-  
 բան է եկեղեցի թաւանն ինչպէս ինչ-  
 ապար ման ի ման ի ստա՞ միանաբան  
 եկեղեցւոյ նշանակութիւնը հարմար  
 ական եկեղեցւոյ մէջ շատ այլափոխ-  
 ւած է՝ ուրիշ շատ գաղափարներու  
 հետ՝ այնպէս որ մտքերու փոփոխա-  
 կանութեանը համեմատ եկեղեցւոյ գա-  
 ղափարն այլ փոխուած է, եւ անաւել

սրտերու՝ փոփոխականութեանը յար-  
 մարցուած, որ աւելի ալ վնասակար է:  
 Յիրուէի այն ամենայն կիրքերը՝ որ ան-  
 գաց եւ ժողովրդոց կառավարութեանը  
 մէջ կրկնուան՝ կերեւան նաեւ եկեղե-  
 ցւոյ կառավարութեանը մէջ, եւ ինչ-  
 պէս որ շատ մարդիկ աշխատե-  
 ր են ու կաշխատին որ ազգութիւններն ու կա-  
 րավարութիւնները իրարու հետ քա-  
 ղաքականօրէն շփոթեն, նոյնպէս աշ-  
 խատե-ր են որ եկեղեցին այլ իւր կառա-  
 վարութեանը հետ շփոթեն: Կարգա-  
 թէ Ս. Յոս. ջանքը եւ աշխատութիւնը մե-  
 ծամեծ վնասներ բրած է իրան զի ոչ  
 միայն կոտորանայ ազով եկեղեցւոյ բո-  
 յոր այն մասը՝ որ եկեղեցական դասա-  
 կարգութեան մէջ չմաներ, այլ եւ այն  
 դասակարգութեան մէջ չափազանց եւ  
 վաճառողջ գործունէութիւն մը կաւե-  
 յանայ՝ քայց յայնմանէ՝ ինքն իսկ եկե-  
 ղեցին տարտաւոր կլինի իւր գաղափար-  
 գութեան եւ կառավարութեան յան-  
 ցանքներուն: Այս այնպիսի ծանր պա-  
 րագայ է՝ զոր կարծէ ամենայն ջանքով  
 դադրեցնելու աշխատիլ: Ինչպէս որ  
 ի քաղաքական կարգի արեւմտեան ազ-  
 գերը վերջապէս հասկընալով՝ որ իրենք  
 փոխանակ իրենց օգտին համար կառա-  
 վարուելու՝ միայն իրենց մեծաւորաց  
 օգտին համար կկառավարուին, ոտք ե-  
 լան որ նորէն ձեռք ձգեն իրենց իրա-  
 ւունքներն ու ինքնօրինութիւնը՝ ըստ  
 բնական սկզբանց խոհական տրամաբա-  
 նութեան: Նոյնպէս ալ ի կրօնական  
 կարգի արեւմտեան եկեղեցին պարտա-  
 կան է ամիսփել իւր մեծաւորաց իշ-  
 խանութիւնը իրեն ինչ հակառակ թահ-